ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Հանրային և մասնավոր գործընկերությունը (ՀՄԳ) լայնորեն տարածվում է աշխարհում՝ որպես հանրային աշխատանքների կազմակերպման, նոր ենթակառուցվածքների ստեղծման, համապատասխան ծառայությունների մատուցման գործիք:

ՀՄԳ զարգացումը բնութագրվում է մի շարք հիմնական գործոններով, որոնք նպաստում են պետության և գործարարության փոխգործակցության ձևերի ընդլայնմանը:

Նախ՝ ՀՄԳ-ն խառը տնտեսության մեխանիզմներից է, որը հնարավորություն է տալիս զարգացնելու գործարարության և հանրության փոխհարաբերությունները: Երկրորդ՝ ՀՄԳ-ն թույլ է տալիս մասնավոր հատվածի ռեսուրսները ներգրավել այն ոլորտների և ճյուղերի վերարտադրման գործընթացներում, որոնք պետության և տեղական ինքնակառավարման մարմինների սեփականությունն են, ինչպես նաև մասնավոր ձեռնարկատիրական նախաձեռնությունն օգտագործել բյուջեի ծախսերի արդյունավետությունը բարելավելու համար: Երրորդ՝ պետության և գործարարության ջանքերի ու ռեսուրսների միավորումը մրցակցային ծրագրերի շրջանակներում ստեղծում է մրցակցային լրացուցիչ առավելություններ: Գործարարությունը, պետական ինստիտուտների համեմատ, օժտված է ավելի մեծ շարժունությամբ՝ ապահովելով որոշումների կայացման արագություն, նորարարությունների իրագործում, տեխնիկական և տեխնոլոգիական կատարելագործման ցանկություն մրցունակության ձևավորման համար: Կառավարությունն իր հերթին կարող է ապահովել ՀՄԳ ծրագրերի ավելի արդյունավետ իրագործում՝ ստեղծելով իրավական կայուն դաշտ, իրականացնելով կազմակերպական միջոցառումներ, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության հետ համագործակցություն, կիրառելով ֆինանսատնտեսական գործիքներ՝ դրամաշնորհներ, երաշխիքներ, հարկային արտոնություններ և այլ տեսակի աջակցություն:

Հաշվի առնելով այս գործոնները՝ ընդհանուր առմամբ կարելի է կանխատեսել հանրային և մասնավոր գործընկերության ձևերի զարգացման ընթացքը, դրանց բազմազանեցումը: Սակայն յուրաքանչյուր երկրում այս գործընթացի շարժը կախված է պետության քաղաքականությունից, տնտեսական և սոցիալական միասնության վրա հիմնված

համագործակցության ցանկությունից, քաղաքացիական հասարակության դիրքորոշումից: Հանրային–մասնավոր գործընկերության առարկա են պետական և մունիցիպալ սեփականությունը, ինչպես նաև պետության, մունիցիպալ կառավարման մարմինների և բյուջետային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունները[1]:

ՀՄԳ-ն ենթակառուցվածքներ է ներմուծում մասնավոր հատվածի միջոցները և խթանները, բայցևայնպես, պահանջվում է կառավարության ներկայություն՝ որպես պայմանագրի կողմ և կարգավորող մարմին: ՀՄԳ-ն թույլ է տալիս ծրագրերի ռիսկերը կիսել կառավարության ու մասնավոր ընկերությունների միջև և մասնավոր կապիտալը գրավել դեպի ենթակառուցվածքների ոլորտ:

Շրջանառվում է «հանրային–մասնավոր գործընկերություն» հասկացության մեկնաբանման երկու մոտեցում: Առաջինի համաձայն՝ ՀՄԳ-ն դիտվում է որպես անուղղակի մասնավորեցում[2]: Սա հաշվի է առնում մասնավոր ընկերությունների մասնակցությունը սեփականության այն իրավասությունների իրացմանը, որոնք նախագծի շրջանակում պետության կողմից փոխանցվում են իրեն: Առավել կարևոր է պետության և հանրության կողմից մասնավորեցման գործընթացներում ՀՄԳ դերի և նշանակության ճիշտ ըմբռնումը:

Ըստ որոշ փորձագետների՝ ՀՄԳ-ն պարզապես մասնավորեցման տեսակ է: Այսպես՝ «Հանրային և մասնավոր գործընկերություն. հանրային բարեկեցության ֆինանսավորումը» ամերիկյան ուսումնասիրությունում ասվում է, որ ենթակառուցվածքների ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրներից մեկը կարող է դառնալ «սեփականաշնորհումը, այսինքն՝ տարաբնույթ համաձայնությունների կնքումը, որոնց հիման վրա զգալիորեն աճում է մասնավոր ընկերությունների մասնակցությունը պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների ֆինանսավորմանը, նախագծմանը, շինարարությանը, տիրապետմանն ու շահագործմանը»[3]:

Ըստ երկրորդ մոտեցման՝ գործընկերությունները գտնվում են մասնավոր և պետական հատվածների սահմանին՝ լինելով ոչ մասնավորեցված, ոչ ազգայնացված ինստիտուտներ: Ընդ որում, ի տարբերություն մասնավորեցման՝ որպես ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական սեփականության հատուցելի փոխանցման ձևի, գործընկերություններում սեփականության իրավունքը պատկանում է պետությանը[4]: Այս առումով պետությունը և մասնավոր ընկերությունը երբեք համահա-

---

[1] Տե՛ս **Варнавский В. Г., Клименко А. В., Королев В. А.** и др., Государственно-частное партнерство: теория и практика. М., 2010, էջ 13:

[2] Տե՛ս «Public-Private Partnerships: Financing a Common Wealth». Wash., Washington, 1985, էջ 67:

[3] Նույն տեղում:

[4] Տե՛ս **Gerrard M.,** What Are Public-Private Partnerships, and How Do They Differ from Privatizations? // Finance and Development, 2001, vol. 38, № 3, էջ 35:

վասար դիրք չեն ունենա, քանի որ ՀՄԳ ծրագրերում հիմնարար գույքային հարաբերությունները չեն փոփոխվում, որքան էլ մեծ լինի մասնավոր հատվածի՝ որպես ներդրողի, մենեջերի կամ օպերատորի դերը:

Կան ՀՄԳ տարբեր սահմանումներ: Դրանցից ամենատարածվածը Համաշխարհային բանկի բնորոշումն է. «ՀՄԳ-ն համաձայնություն է հանրային և մասնավոր կողմերի միջև արտադրության և ենթակառուցվածքային ծառայություններ մատուցելու, լրացուցիչ ներդրումներ ներգրավելու նպատակով և, ինչն ավելի կարևոր է, ծառայում է որպես բյուջեի ֆինանսավորման արդյունավետությունը բարելավելու միջոց»[5]:

Տարբեր երկրներ ունեն հանրային-մասնավոր գործընկերության՝ իրենց սկզբունքներով հիմնավորված սահմանումը, օրինակ.

ԱՄՆ - *Պետության և մասնավոր ընկերության միջև հաստատված պայմանագիր է, որը հնարավորություն է տալիս վերջինիս ըստ համաձայնության մասնակցելու պետական սեփականությանը և իրականացնելու գործառույթներ, որոնք ավանդաբար գտնվել են պետական մարմինների պատասխանատվության ոլորտում: Հիմնական գույքային իրավունքները չեն փոխվում, և օբյեկտը մասնավոր ընկերությանը փոխանցելուց հետո պետությունը մնում է դրա սեփականատերը*[6]:

Եվրամիության երկրներ - *Հանրային մարմինների և գործարարների միջև համագործակցության ձև է, որի նպատակն է ֆինանսավորման, ենթակառուցվածքների շինարարության, արդիականացման, կառավարման, շահագործման կամ ծառայությունների մատուցման ապահովումը*[7]:

Մեծ Բրիտանիա - *Ժամանակակից որակյալ ծառայություններ մատուցելու և երկրի մրցունակության մակարդակը բարձրացնելու կառավարության ռազմավարության առանցքային տարր է, որն ունի բիզնես կառույցների լայն շրջանակ և գործընկերության ձևեր (մասնավոր նախաձեռնություն, պետական սեփականություն հանդիսացող առևտրային գործունեություն իրականացնող ձեռնարկությունների որոշ բաժնետոմսերի վաճառք)*[8]:

Իռլանդիա - *Համագործակցություն է հանրային և մասնավոր հատվածների միջև՝ որոշակի ծրագիր իրագործելու կամ հանրային ծառայություններ մատուցելու նպատակով, որոնց իրականացումը ավանդաբար պետության պատասխանատվության սահմաններում է*[9]:

---

[5] **Delmon J.,** Private Sector Investment in Infrastructure: Project Finance, PPP Projects and Risk. The World Bank and Kluwer Law International, 2009, p. 7.

[6] Տե՛ս «Report to Congress on Public-Private Partnerships». US Department of Transportation, 2004:

[7] Տե՛ս «Green Paper on Public-Private Partnerships and Community Law on Public Contracts and Concessions Commission of the European Communities Brussels», 2003:

[8] Տե՛ս «Public-Private Partnership for Innovation Policy Rationale». Trends and Issues Organization for Economic Cooperation and Development, 2003:

[9] Տե՛ս «Государственно-частное партнерство – новая форма взаимодействия государственного и частного секторов в финансировании инфраструктурных и социальных проектов» // Материалы семинара. М., 2003:

Ռուսաստան - *Տնտեսական ծրագրերի իրականացման շրջանակներում կառավարության և գործարարության հավասարության և շահերի համակարգման իրավական մեխանիզմ է պետական կառավարման նպատակներին հասնելու համար*[10]*:*

Հայաստան - *Հանրային հատվածի և մասնավոր գործընկերոջ միջև համագործակցություն է, որն ուղղված է ենթակառուցվածքների ֆինանսավորմանը, կառուցմանը, վերանորոգմանը, կառավարմանը, պահպանմանը, շահագործումից դուրսբերմանը, դրանց միջոցով երկարաժամկետ ծառայությունների մատուցմանը (պետք է ներառի նշված գործողություններից առնվազն երկուսը) թափանցիկության, մրցակցության, համագործակցության երկարատևության սկզբունքների հիման վրա*[11]*:*

Ամերիկացի պրոֆեսոր Է. Սավասն առաջարկում է հանրային-մասնավոր գործակցության երեք բնորոշում[12]:

1) ՀՄԳ-ն ցանկացած պայմանավորվածություն է, ըստ որի՝ հասարակական և մասնավոր հատվածները միավորվում են ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման նպատակով: Այսինքն՝ պայմանագրերը, ֆրանշիզները և դրամաշնորհները սույն լայն սահմանման շրջանակում են:

2) ՀՄԳ-ները համալիր, բազմագործընկեր ենթակառուցվածքային նախագծեր են:

3) ՀՄԳ-ն սահմանում է ֆորմալ համագործակցություն գործարարության, հասարակության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև բնակչության կենսամակարդակի բարելավման և տարածքների զարգացման նպատակով, որի շրջանակներում պետության և մասնավոր հատվածի ավանդական դերերը վերաբաշխվում են:

Այստեղ չեն նշվում այն պայմանները, որոնց համաձայն համագործակցության ոլորտները կսահմանվեն որպես ՀՄԳ: Այսինքն՝ ՀՄԳ-ն դիտարկվում է որպես ցանկացած հարաբերություն հանրային և մասնավոր հատվածների միջև, ինչը չի արտահայտում հասկացության էությունը և դրա՝ իբրև առանձին տնտեսական կատեգորիայի տարբերակիչ հատկանիշները:

Է. Քլիջնը և Գ. Թեյսմանը առաջարկել են հանրային-մասնավոր գործընկերության հստակ սահմանում. «Հանրային-մասնավոր գործընկերությունը կարելի է բնութագրել որպես հանրային և մասնավոր հատվածների կայուն փոխգործակցություն, որի սահմաններում մշակվում են համատեղ արտադրանքը կամ ծառայությունները, իսկ ռիսկե-

---

[10] Տե՛ս **Вилисов М. В.** Государственно-частное партнерство: политико-правовой аспект // "Власть", 2006, № 7:

[11] Տե՛ս «Հավելված ՀՀ Կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի № 1241-Ն որոշման». www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2012/09/MAR-1241.pdf

[12] Տե՛ս **Savas E. S.**, Privatization and Public Private Partnerships, N.Y., Chatham House Publishers, 2000, էջ 105-106:

ը, ծախսերն ու շահույթը բաշխվում են գործընկերների միջև»[13]: Այս սահմանման մեջ արդեն արտահայտված են գործընկերների՝ ՀՄԳ ստեղծելու միասնական նպատակը և պայմանները, սակայն չեն հստակեցված պետության ու մասնավոր հատվածի այս և համագործակցության այլ ձևերի տարբերությունները:

Ներկայացնենք նաև Հ. Համի և Ջ. Կոպենջանի առաջարկած սահմանումը. «ՀՄԳ-ն երկարաժամկետ համագործակցություն է հանրային և մասնավոր հատվածների միջև, որի շրջանակներում նրանք համատեղ ապրանք կամ ծառայություն են մշակում, կիսում են դրանց հետ կապված ռիսկերը, ծախսերը և ռեսուրսները: ՀՄԳ-ի նպատակն է ոչ միայն ստեղծել համատեղ արտադրանք նորարարական լուծումներով, այլ նաև առաջարկում է ինստիտուցիոնալ թարմացում՝ աշխատանքային մեթոդների ընթացակարգերի, համաձայնագրերի և հաստատությունների արդիականացում»[14]:

Այս սահմանմամբ հեղինակները ոչ միայն ընդգծում են ՀՄԳ-ի՝ ընդհանուր նպատակին հասնելու տեսությունը, այլև մանրամասն նկարագրում են պետության և մասնավոր հատվածի փոխգործակցության առանձնահատկությունները՝ կարևորելով ապրանքի կամ ծառայության համատեղ արտադրության ռիսկերի բաշխումը կողմերի միջև:

Ներկայումս մի շարք հեղինակներ եկել են փոխհամաձայնության, որ ՀՄԳ-ն ենթադրում է միասնական նպատակի իրականացման համար հանրային և մասնավոր հատվածների ռեսուրսների միավորում՝ համագործակցության շնորհիվ համապատասխան իրավասությունների և ուժեղ կողմերի համատեղմամբ մեծացնելով օգուտները: Այս մեկնաբանությունը թեև արտահայտում է ՀՄԳ ձևավորման հիմնական գաղափարը, բայց չի փոխանցում այս մեխանիզմի կիրառման տարբերակիչ հատկանիշները, դրա ձևավորման առանձնահատկությունները:

Գ. Հոջը և Կ. Գրիվը հանրային-մասնավոր գործընկերությունը բնորոշում են որպես «....համագործակցության նպատակով ինստիտուցիոնալ պայմանավորվածություն հանրային և մասնավոր հատվածների միջև, որն իրականացվում է կազմակերպչական նոր միավորի ստեղծմամբ»[15]: Ըստ նրանց մեկ այլ սահմանման՝ «ՀՄԳ-ն ֆինանսական մոդել է, որը թույլ է տալիս մասնավոր հատվածի կապիտալը ներգրավել և օգտագործել հանրային ոլորտում՝ մեծացնելով տարածաշրջանային կառավարման արդյունավետությունը, ինչպես նաև բարելավելով ներգրավված մասնավոր ընկերությունների գոր-

[13] **Klijn E. H., Teisman G. R.,** Governing Public-Private Partnerships: Analyzing and Managing the Processes and Institutional Characteristics of Public-Private Partnerships// Public-Private Partnerships: Theory and Practice in International Perspective / Ed. by S.P,Osborne. London: Routledge, 2000, p. 85.

[14] **Ham H. van, Koppenjan J.,** Building Public-Private Partnerships: Assesing and Managing Risks in Port Development//Public Management Review, 2001, vol. 3, № 4, p. 598.

[15] **Hodge G., Greve C.,** The Challenge of Public-Private Partnerships: Learning from International Experience. Cheltenham, UK: Edward Elgar, 2005.

ծունեությունը»[16]:

Այս սահմանումը պարունակում է նոր տարր, որն անհրաժեշտ է հանրային ոլորտի ենթակառուցվածքների ստեղծման կամ զարգացման ծրագրի իրագործման համար, մասնավորապես՝ կազմակերպական նոր միավոր, որը պատասխանատու է մասնավոր հատվածի կողմից ծրագիրը իրականացնելու համար:

Ըստ ավստրալիացի տնտեսագետ Գ. Հոջի՝ արդի մասնագիտական գրականության մեջ հնարավոր է առանձնացնել ՀՄԳ սահմանման հինգ տարբեր մոտեցում.

- պայմանագրային համաձայնություն պետական գործակալի և մասնավոր հատվածի միջև, որը վերջինիս թույլ է տալիս մասնակցելու հանրային բարիքների ստեղծմանը,
- մասնավորեցման այլընտրանք,
- ինչպես շուկայի, այնպես էլ պետության անհաջողություններ-ը հաղթահարելու միջոց, մասնավոր հատվածի կառավարման սկզբունքների կիրառման գործիք՝ բարձրացնելու հանրային հատվածի գործունեության արդյունավետությունը,
- ճգնաժամային իրավիճակներում գործարարության աջակցության մեխանիզմ,
- լեզվախաղ՝ հորինված իրավաբանների, խորհրդատուների և բրոքերների կողմից՝ ավելի մեծ միջնորդավճարներ ստանալու ակնկալիքով[17]:

Ըստ հանրային-մասնավոր գործընկերության արդյունավետ կառավարման եվրոպական տնտեսական հանձնաժողովի ուղեցույցի՝ «Հանրային-մասնավոր գործընկերության նպատակն է ապահովել հանրային հատվածի օբյեկտների ֆինանսավորումը, պլանավորումը, շահագործումը, արտադրությունը և ծառայությունների մատուցումը»:

Դրա հիմնական հատկանիշներն են.

ա) սպասարկման ապահովման և ծառայությունների մատուցման երկարաժամկետությունը (երբեմն մինչև 30 տարի),

բ) ռիսկերի՝ մասնավոր հատվածին փոխանցումը,

գ) իրավաբանական անձանց կողմից պետական և մունիցիպալ կառույցների հետ կնքված երկարաժամկետ պայմանագրերի բազմազանությունը:

Հանրային և մասնավոր հատվածների միջև պայմանագրերի կնքման ժամանակ հանրային-մասնավոր գործընկերությունը դիմում է նորարարական մեթոդների. մասնավոր հատվածը ծրագրի իրականացման ժամանակ օգտագործում է իր կապիտալը և կառավարման

---

[16] **Hodge G., Greve C.,** Public-Private Partnerships: An International Performance Review // Public Administration Review. 2007, p. 37–49.

[17] Տե՛ս **Hodge G.,** Risks in Public-Private Partnerships: shifting, sharing or shirking? // Asia Pacific Journal of Public Administration, 2006, № 26 (2), էջ 157–179:

կարողությունները՝ համաձայն հաստատված ժամկետների և բյուջեի, իսկ պետական հատվածը պատասխանատվություն է կրում շահավետ միջոցով բնակչությանը այդ ծառայությունների պատշաճ մատուցումն ապահովելու համար և դրական ազդեցություն է թողնում տնտեսության զարգացման և մարդկանց կյանքի որակի բարելավման վրա: Կան տարբեր նպատակներով ստեղծված հանրային-մասնավոր գործընկերության տեսակներ, որոնք ընդգրկում են շուկայի հատվածների լայն շրջանակ և արտացոլում են պետության տարբեր ենթակառուցվածքային ծառայությունների կարիքները:

Վերոնշյալ սահմանումներն արտահայտում են ՀՄԳ առանձնահատկությունները՝ պետության և մասնավոր հատվածի միջև հարաբերությունների տևողությունը, ռիսկերի, պարտականությունների բաշխումը, ծախսերը գործընկերների միջև, ինչպես նաև կողմերից յուրաքանչյուրի օգուտները: ՀՄԳ-ի միջոցով ծրագրի իրագործումից ստացված եկամուտները կարող են շատ տարբեր լինել՝ կախված կողմերի նպատակներից:

Մասնավոր հատվածի համար ՀՄԳ մասնակցությունից ստացված օգուտը երկարաժամկետ երաշխավորված եկամտի ապահովումն է, ինչպես նաև սեփական գործունեության ընդլայնման հնարավորությունը, իսկ պետության համար՝ ծրագրի շրջանակներում հատկապես «գին–որակ» հարաբերակցության բարելավումը, ինչը հանգեցնում է պետական բյուջեի և հարկատուների բեռի նվազեցմանը, ինչպես նաև մասնավոր հատվածի կողմից նորարարությունների ներգրավման շնորհիվ մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը:

Միջազգային փորձի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել մի շարք պայմաններ, որոնց պահպանումն ապահովում է ՀՄԳ զարգացման հաջողությունը տնտեսական հարաբերությունների արդի համակարգում: Հանրային-մասնավոր գործընկերության համար առավել սկզբունքային է 2 կողմի շահերի հակասությունների հաղթահարումը: Մեկ այլ անհրաժեշտ պայման է ինստիտուցիոնալ միջավայրի ստեղծումը, որի ապահովումը պահանջում է բավական երկար ժամանակ և հանրային համակարգված ջանքեր: Կարևոր է նաև ՀՄԳ ծրագրերի և նախագծերի մշակման մեջ պետության առաջատար դերը, այդ համագործակցությունում իշխանական լծակների ու առավելությունների արդյունավետ կիրառումը:

Պետության և գործարարության սերտ կապերը իրավական պետության և շուկայական կառավարման համակարգի էությունն են: Մինչդեռ պետության (ի դեմս տարբեր պետական սուբյեկտների) և բիզնեսի միջև անխուսափելի են հանրային և մասնավոր շահերի հակասությունները: Ինչպես կհաղթահարվեն դրանք, ինչպես կազդի այդ համագործակցությունը երկրի, տարածաշրջանի, քաղաքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա, ինչպիսի սոցիալ-տնտեսական արդյունքներ է ակնկալում հասարակությունը մասնավոր հատվածին արդյունաբերու-

թյան և ծառայությունների որոշ տեսակներ փոխանցելուց, որոնք ավանդաբար գտնվել են պետական իրավասության ներքո, կախված է քաղաքացիական հասարակության հասունությունից, պետության կայացածությունից, պետական ապարատի գործունեության վերահսկումն իրականացնող հասարակական ինստիտուտների զարգացման աստիճանից, գործընկերության գործունեության թափանցիկությունից:

Նույնիսկ ինստիտուցիոնալ գործընկերային հզոր հարաբերություններ ունեցող զարգացած երկրներում ՀՄԳ-ները երբեմն օգտագործվում են մասնավոր շահերի հետաքրքրությունների շրջանակում: Հետաքրքրությունների հավասարակշռության տեղաշարժի հետևանքով խախտվում են հավասար մրցակցային պայմանները, մեծանում է անվստահությունը կառավարության և մասնավոր հատվածի գործընկերային հարաբերությունների նկատմամբ: Գործնականում դա հաճախ պայմանավորված է լինում կոռուպցիայով:

Տնտեսության մեջ պետական միջամտության ինստիտուցիոնալ հիմքը պետության կողմից սեփականության իրավունքի, ազատ մրցակցության և հանրային բարիքների հավասար մատչելիության ապահովման գործառույթն է, ինչպես նաև որոշ ռեսուրսների հասանելիության կանոնակարգումը: Ընդ որում՝ որպես հիմնական չափանիշ պետք է ընդունվեն հանրային, այլ ոչ թե առանձին տնտեսավարող սուբյեկտների անհատական շահերը: Այսինքն՝ պետական միջամտությունը պետք է առաջին հերթին ուղղված լինի շուկայի ձախողումների, մասնավորապես՝ մենաշնորհի, հանրային գործունեության որոշ ոչ շահութաբեր տեսակների, կառուցվածքային անհամաչափության և այլնի վերացմանը: Շուկայական մեխանիզմների նշված թերություններն առավել ակնհայտորեն արտահայտված են արտադրական ենթակառուցվածքի ոլորտներում, որոնց զարգացումից մեծապես կախված է տնտեսության վիճակը, ինչպես նաև սոցիալական ոլորտը, որտեղ պետության դիրքը ավանդաբար եղել և մնում է ամուր:

ՀՄԳ զարգացման և կայացման առումով էական ազդեցություն ունեն համապատասխան ինստիտուցիոնալ միջավայրը, սոցիալ-քաղաքական ուժերի բաշխվածությունը և այս կամ այն քաղաքական ուսմունքի գերակշռությունը: Ընդ որում՝ դա ոչ միայն քաղաքական կամքի դրսևորում է ամենաբարձր մակարդակով, այլև քաղաքական ապահովության ստեղծում սեփականաշնորհման մեխանիզմների կիրառման, սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների բնագավառում հասարակական կարծիքի նախապատրաստման միջոցով:

Գիտական գրականության մեջ և պաշտոնական փաստաթղթերում հանրային-մասնավոր գործընկերությանը վերաբերող ձևակերպումների բազմազանությունը, որպես հետևանք՝ սույն հայեցակարգի բովանդակության զգալի անորոշությունը հիմնականում արդյունք են միջազգային փաստաթղթերում այս հայեցակարգի միասնական

ըմբռնման բացակայության: Այլ կերպ ասած՝ հարաբերությունների զարգացման այս մակարդակում հանրային-մասնավոր գործընկերության շահագրգիռ կողմերի համար շահեկան է պարզեցված ձևակերպման վրա հիմնված «հանրային-մասնավոր գործընկերություն» սահմանման ոչ հստակ ըմբռնումը:

Քանի որ չկա «հանրային-մասնավոր գործընկերություն» հասկացության ընդհանուր ըմբռնում, կարելի է առանձնացնել դրա առավել արտահայտիչ հատկանիշները, որոնց առկայության դեպքում մասնավոր հատվածի և հանրային մարմինների փոխազդեցության տարբեր ձևեր կարող են որակվել որպես ՀՄԳ:

ՀՄԳ-ն բնութագրվում է.

ա) որոշակի ծրագրի իրականացման նպատակով պետական մարմինների և տնտեսավարող սուբյեկտի միջև երկարաժամկետ պայմանագրի առկայությամբ,

բ) պետական կամ մունիցիպալ կառավարության առջև դրված խնդիրների և գործառույթների մի մասի՝ մասնավոր հատվածին փոխանցմամբ,

գ) ծրագրի ֆինանսավորմանը մասնավոր կապիտալի ներգրավմամբ,

դ) պետական և մասնավոր գործընկերների միջև նախագծի ռիսկերի բաշխմամբ:

Այս առումով ՀՄԳ ծրագրերի շարքն են դասվում ինչպես ծառայությունների փոքր, այնպես էլ բազմամիլիոնանոց կոնցեսիոն պայմանագրերը:

Հանրային-մասնավոր գործընկերությունը, հիմնված լինելով խառը տնտեսության սկզբունքի վրա, հիմնականում զարգացնում և լրացնում է այն: ՀՄԳ-ն ձևավորվում է որպես որոշակի ինստիտուցիոնալ միջավայրում տնտեսավարող սուբյեկտների հարաբերությունների համակարգ և ընդգրկում է մի շարք ապրանքների և ծառայությունների արտադրության ոլորտներ:

Ընդ որում՝ «խառը տնտեսություն» և «հանրային-մասնավոր գործընկերություն» հասկացությունները նույնական չեն: Ըստ Մ. Կլինովոյի մեկնաբանության՝ «Խառը տնտեսությունում հանրային և մասնավոր կապիտալի ոչ բոլոր փոխգործակցությունները կարելի է վերագրել հանրային–մասնավոր գործընկերությանը. այդպիսիք կարելի է համարել միայն նրանք, որոնց պարագայում մասնավորը պետության աջակցությամբ և պատվերով իրականացնում է որոշակի գործառույթներ, որոնք նախկինում վերջինիս իրավասությունների դաշտում էին, երբ շուկայական հարաբերությունները ներթափանցում էին պետական գործունեության ավանդական ոլորտներ և ենթակառուցվածքներ»[18]:

ՀՄԳ-ն խարսխվում է նաև տնտեսության պետական կարգավորման վրա: Ժամանակակից տնտեսության կազմակերպման և կառա-

[18] **Клинова М. В.** Государство и частный капитал в поисках прагматического взаимодействия. М., 2009, с. 89-90.

վարման բարդ ձևերն անհնար է պատկերացնել առանց տնտեսության առանձին ճյուղերի ու ընկերությունների գործունեության պետական կարգավորման: Յուրաքանչյուր երկրում պետական կառույցի զգալի մասն աշխատում է այդ ուղղությամբ, հրապարակվում են բիզնես գործընթացները կարգավորող հսկայածավալ կանոնակարգեր, ձևափոխվում են գոյություն ունեցող գործիքները, ստեղծվում են նորերը:

Հայաստանը ներկայումս ամբողջությամբ չի օգտագործում ՀՄԳ մոդելը: Նախկինում իրականացված որոշ ՀՄԳ նախաձեռնություններ վիճահարույց էին և դժգոհություններ էին առաջացնում. ռեսուրսների կորուստները և բարձր գները դեռևս չլուծված խնդիրներ են: Հայաստանում ՀՄԳ-ները տարածվածության, ծավալի և խորության տեսակետից սահմանափակ բնույթ ունեն, կաշկանդված են զանազան խանգարող հանգամանքներով: Մեր երկիրը ՀՄԳ գործողությունների կանոնակարգման կարիք ունի, ինչը կնպաստի այս մոդելի ընձեռած հնարավորությունների լիարժեք օգտագործմանը: ՀՄԳ գործողությունների պլանը պետք է հիմնված լինի Հայաստանի ներկա պայմանների ինստիտուցիոնալ հաշվեքարտի վրա, որը կարտացոլի ուժեղ և թույլ կողմերը:

Բանալի բառեր – *հանրային-մասնավոր գործընկերություն, խառը տնտեսություն, անուղղակի մասնավորեցում, ՀՄԳ նախագծեր, պարտավորություններ, ռիսկերի բաշխում*

АЙК САРГСЯН – ***Особенности государственно-частного партнёрства.*** – Государственно-частное партнёрство находит широкое распространение как инструмент создания новой инфраструктуры для организации общественных работ и коммунальных услуг. Динамика этого процесса в каждой стране зависит от политики, от желания сотрудничать с бизнесом на основе экономического и социального консенсуса, от позиции гражданского общества. Неопределённость понятия «государственно-частное партнёрство» обусловлена разными подходами к нему в международных документах. В статье отражены его наиболее общие качества, которые позволяют охарактеризовать различные формы взаимодействия между государственными органами и частным сектором как ГЧП.

Ключевые слова: *государственно-частное партнёрство, смешанная экономика, косвенная приватизация, ГЧП-проекты, обязательства, распределение рисков*

HAYK SARGSYAN – ***Peculiarities of Public-Private Partnership.*** – Public-private partnership in all its manifestations has found distribution in the world – as a tool for creating a new infrastructure for organizing public works and services. The dynamics of this process in each country depends on the politics, on the desire to cooperate with business on the basis of economic and social consensus, the position of civil society. The variety of approaches to public-private partnerships, the uncertainty of this concept, are the result of the lack of a unified approach in international documents. Since there is no single approach to the term "public-private partnership", an attempt is made to reflect the most common expressive qualities of this cooperation, which characterizes various forms of interaction between public authorities and the private sector as PPPs.

Key Words: *public-private partnership, mixed economy, indirect privatization, PPP projects, duties, risk sharing*